ԱԼԲԵՐՏ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ասպիրանտ

ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածում քննարկվում են տնտեսության մեջ տեղի ունեցող նորամուծական գործընթացները, մասնավորապես՝ դրանցում պետական միջամտության մի շարք հիմնահարցեր: Տնտեսագիտական գրականության մեջ նորամուծական քաղաքականությունը ներկայացվում է իրար հակասող երկու հիմնական տեսական մոտեցումներով: Մի կողմից՝ նորդասական տնտեսագիտությունը շուկան դիտարկում է որպես տնտեսության՝ հասարակական օպտիմումի հասնելու գրավական և պետական միջամտությունը հիմնավորում է միայն շուկայի ձախողման դեպքերում, մյուս կողմից՝ նորամուծական համակարգերի մոտեցումը տրամադրում է նորամուծական քաղաքականության առավել լայն գործիքակազմ՝ դրանք բացատրելով համակարգային, այլ ոչ թե բուն շուկայական ձախողումներով: Հոդվածում կատարվել է վերոնշյալ երկու մոտեցումների համեմատական վերլուծություն, այդ համատեքստում ներկայացվել է ՀՀ-ում նորամուծական քաղաքականությունը:

Հիմնաբառեր. *նորամուծական քաղաքականություն, շուկայի ձախողում, համակարգային ձախողում, ազգային նորամուծական համակարգ, քաղաքականության արդյունավետություն*

JEL: O30, O31, O32

Տնտեսագիտության տեսանկյունից նորամուծությունը կարող է սահմանվել որպես նոր կամ նշանակալիորեն բարելավված արտադրանքի (ապրանքի, ծառայության), գործընթացի կիրառություն[1]: Այս սահմանմամբ հստակորեն կարելի է տարբերակել *նորամուծություն* եզրույթը *նորույթից:* Վերջինս

[1] Տե՛ս **Greenhalgh C., Rogers M.,** Innovation, Intellectual Property, and Economic Growth, Princeton University Press, 2010, էջ 4:

կարող է լինել որևէ նոր գաղափար կամ հայտնագործություն, այնինչ նորամուծությունը դրանց գործնական կիրառությունն է և դրանցից որոշակի տնտեսական օգուտների ակնկալումը: Սահմանումից պարզ է դառնում, որ նորամուծությունները կարող են արտահայտվել տարբեր ձևաչափերով:

Արտադրանքի նորամուծությունը վերաբերում է ապրանքներին և ծառայություններին կամ դրանց համադրությանը: Իր հերթին՝ գործընթացների նորամուծությունը սահմանվում է որպես տնտեսական գործունեության իրականացման նոր մոտեցում[2]: Դա կարող է լինել տեխնոլոգիական և կազմակերպական: Պետք է նշել նաև, որ նորամուծության այս երկու հիմնական դրսևորումները սերտ փոխկապված են: Այսպես՝ շատ արտադրական նորամուծություններ կարող են ձևափոխվել գործընթացների նորամուծությունների՝ դրանց կիրառման միջոցով:

Տնտեսության մեջ նորամուծական գործընթացները մեծ կարևորություն ունեն ու էապես ազդում են տնտեսության արտադրողականության և մրցունակության աճի վրա, քանի որ ժամանակակից պայմաններում նորամուծությունը համարվում է տնտեսական արժեքի ստեղծման գլխավոր գործոն:



Գծապատկեր 1. *Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի մեջ հետազոտական և մշակման ծախսերի տեսակարար կշիռների միջև կախվածությունը*[3]

Գծապատկերում բավական նկատելի է կոռելյացիոն կախվածությունը ըստ երկրների մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի մեջ հետազոտական և մշակման ծախսերի միջև (ՀՆԱ-ն արտահայտված է ԱՄՆ դոլարով)՝ 2014 թ.:

Հայաստանը, փաստորեն, շատ չի շեղվում ընդհանուր օրինաչափությունից: Երկրներն ունեն տնտեսական առանձնահատկություններ, և այս կախ-

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 5:
[3] Գծապատկերը կազմվել է ըստ Համաշխարհային բանկի պաշտոնական կայքի տվյալների՝ data.worldbank.org/

վածությունը բազմագործոն է: Սա միայն ընդհանուր պատկերացում է տալիս «նորամուծություններ – տնտեսական աճ» կապի մասին: Այս օրինաչափությունը, իհարկե, չի կարող հիմնավորել ՀՀ-ում առկա հետազոտական և մշակումների ֆինանսավորման ծավալի օպտիմալությունը, որը, ըստ Համաշխարհային բանկի տրամադրած վիճակագրության, որպես կանոն, կազմում է ՀՆԱ մոտավորապես 0.2-0.3%-ը[4]:

Այլ հարց է, երբ քննարկվում են նորամուծական գործընթացներում պետական մասնակցության անհրաժեշտությունը, չափը և միջոցները: Գոյություն ունեն նորամուծական շուկայում պետության միջամտության հիմնավորմանը վերաբերող իրար հակասող երկու տնտեսագիտական մոտեցումներ[5]:

Առաջինը հիմնված է նորդասական տնտեսագիտական դպրոցի առաջարկած շուկայի ձախողման տեսության վրա: Շուկայի ձախողում կարելի է անվանել այն հնարավոր իրավիճակը, երբ տնտեսական գործակալների՝ իրարից անկախ կայացրած որոշումների արդյունքում տնտեսության մեջ ռեսուրսները բաշխվում են ոչ արդյունավետ: Համաձայն այս մոտեցման՝ պետության միջամտությունը հիմնավոր է միայն այն դեպքում, երբ առկա է շուկայի ձախողում: Կարելի է եզրակացնել, որ տնտեսագիտության նշյալ մոտեցումը առաջարկում է որոշակիորեն խիստ չափանիշ՝ հասկանալու համար պետության միջամտության նպատակահարմարությունը: Կարելի է առանձնացնել շուկայի ձախողման մի շարք հիմնական գործոններ:

Նախ՝ գիտելիքը, որի հիման վրա կատարվում է որոշակի նորամուծություն, հանրային բարիք է: Հանրային բարիքի կարևոր բնութագրիչ է այն հանգամանքը, որ դրա օգտագործումը որևէ անհատի կամ կազմակերպության կողմից չի խոչընդոտում մյուսներին նույնն անելու: Գործնականում հնարավոր չէ նաև հասարակության որևէ մասի համար բացառել դրա սպառումը: Կարելի է եզրակացնել, որ կազմակերպությունները չեն կարող ունենալ գիտելիք ստեղծելու նպատակով ներդրումներ կատարելու տնտեսական շահագրգռվածություն, քանզի այդ գործընթացը ծախսատար է, առանց արգելքի կարող է օգտագործվել շուկայի մյուս մասնակիցների կողմից, և գիտելիք ստեղծողը չի ստանում մրցակցային առավելություններ: Սա հատկապես ճշմարիտ է հիմնարար գիտական հետազոտությունների դեպքում:

Նորամուծական նախագծերը, որպես կանոն, ենթադրում են բավական բարձր հաստատուն ծախսեր, և դա կարող է կազմակերպությունների համար այդ ուղղությամբ ներդրումներ կատարելու խոչընդոտ հանդիսանալ: Բացի դրանից, նորամուծական գործընթացներին բնորոշ է անորոշության բարձր մակարդակը, որը ենթադրում է ներդրված ռեսուրսների փոխհատուցման հետ կապված տնտեսական մեծ ռիսկի առկայություն: Վերջինս կարող է հանգեցնել հետազոտական և մշակման (R&D) ծախսերի թերի ֆինանսավորման՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների պարագայում: Անորոշության հետ կապված խնդիրը կլուծվեր, եթե կապիտալի շուկաները կատարյալ գործեին: Բայց դա գործնականում անիրականալի է հատկապես նորամուծական շուկայի ֆինանսավորման պարագայում, քանզի նորամուծական նախագծերի գնահատումը կապված է մեծ դժվարությունների հետ: Պատճառը տեղե-

---

[4] Տե՛ս http://data.worldbank.org/

[5] Տե՛ս **Chaminade C., Esquis Ch.,** Rationales for Public Policy Intervention in the Innovation Process: Systems of Innovation Approach, The Theory and Practice of Innovation Policy, Edward Elgar Publishing, 2010, էջ 97:

կատվության անհամաչափ բաշխվածությունն է, որը նշանակում է, որ ներդրողները նախագծի վերաբերյալ ավելի քիչ տեղեկությունների են տիրապետում, քան նորարարը[6]:

Շուկայի ձախողման տեսությունը կարելի է համարել նորամուծական քաղաքականության նախադրյալ, համաձայն որի պետության կողմից ցանկացած միջամտություն նախ պետք է արդարացված լինի շուկայի ձախողման որևէ տեսակով, ապա նաև պետք է հիմնավորվի, թե ինչպես է տվյալ քաղաքականությունը տնտեսությունը բերելու օպտիմալ վիճակի[7]:

Փաստորեն, շուկայի ձախողման տեսությունը պատասխանում է այն հարցին, թե ինչո՞ւ պետությունը պետք է իրականացնի նորամուծական քաղաքականություն: Իհարկե, միայն դա բավարար տեսական հիմքեր չի ապահովում արդյունավետ նորամուծական քաղաքականություն մշակելու համար: Անհրաժեշտ է նաև պատասխանել այն հարցին, թե ինչպե՞ս միջամտել: Դա անում է էվոլյուցիոն տնտեսագիտությունը՝ նորամուծական համակարգերի մոտեցմամբ:

Ի տարբերություն նորդասական մոտեցման՝ նորամուծական համակարգերի մոտեցումը տնտեսությունը դիտարկում է որպես անընդհատ վերափոխվող համակարգ՝ դրանով իսկ ենթադրելով ընդհանուր հավասարակշռության բացակայություն: Համաձայն էվոլյուցիոն տնտեսագիտության՝ նորամուծական համակարգը մի ամբողջություն է, այլ ոչ թե իրարից անկախ որոշումներ կայացնող տնտեսական գործակալների համախումբ, և պետական գործառույթը դիտարկվում է ոչ թե իբրև շուկայական, այլ համակարգային ձախողումների շտկում:

Տնտեսագիտական այս մոտեցումը շեշտը դնում է պետական ավելի նախաձեռնողական քաղաքականության վրա, որի կիրառությամբ տնտեսությունը կգործի առավելագույն արդյունավետությամբ:

Համակարգային ձախողումները, նորամուծական քաղաքականության տեսանկյունից, հիմնականում արտահայտվում են հետևյալ դեպքերում:

Ենթակառուցվածքի ֆինանսավորման ձախողում: Նորամուծական համակարգերի պարագայում դա դրսևորվում է համալսարանների, գիտահետազոտական կազմակերպությունների և գիտելիքի փոխանցման հնարավորությունների առկայությամբ: Այս դեպքում և՛ էվոլյուցիոն, և՛ նորդասական տնտեսագիտական դպրոցների մոտեցումն այն է, որ նորամուծական ենթակառուցվածքը հանրային բարիք է, և վերջինս մասնավոր հատվածին վստահելու դեպքում կառաջանա թերի ֆինանսավորման ռիսկ:

Ինչ վերաբերում է ինստիտուցիոնալ ձախողումներին, գրականության մեջ ընդունված է առանձնացնել ինստիտուցիոնալ ձախողման երկու տեսակ՝[8] կոշտ և ոչ կոշտ: Կոշտ ինստիտուցիոնալ ձախողումները վերաբերում են ֆորմալ ինստիտուտների թերի ֆունկցիոնալությանը, ինչպիսին, օրինակ՝ իրավական համակարգն է, որը կարող է և՛ սահմանափակել, և՛ խթանել մասնավոր հատվածում նորամուծական գործունեությունը: Ֆորմալ են համարվում այն ինստիտուտները, որոնք ստեղծվել և ձևավորվել են նպատակադրված: Կոշտ ինստիտուցիոնալ ձախողման օրինակ է նաև մտավոր սեփա-

---

[6] Տե՛ս **Greenhalgh C., Rogers M.,** նշվ. աշխ., էջ 22:

[7] Տե՛ս **Rassenfosse G., Jensen P., Webster E.,** Understanding Innovation: The Role of Policy Intervention, Melbourne Institite of Apllied Economic and Social Research, 2011, էջ 8:

[8] Տե՛ս **Woolthuis R., Lankhuizen M., Gilsing V.,** A system failure framework for innovation policy design, Technovation , Volume 25, Issue 6, 2005, էջ 610:

կանության ոչ արդյունավետ պաշտպանությունը: Ոչ կոշտ ինստիտուցիոնալ ձախողումները կապված են ոչ ֆորմալ ինստիտուտների հետ, որոնք ձևավորվում են առանց հատուկ միջամտության՝ ինքնաբուխ: Դրանց օրինակներից են քաղաքական և սոցիալական մշակույթը, արժեքները և այլն: Վերջիններս նույնպես կարող են մեծապես ազդել նորամուծական շուկայի վրա:

Ի տարբերություն նորդասական մոտեցման, համակարգային մոտեցումը առավել ամուր հիմք է ապահովում քաղաքականության մշակման համար: Համաձայն այս մոտեցման՝ պետական գործառույթն ավելին է, քան ուղղակի շուկայի ձախողումները շտկելը կամ տնտեսության՝ ենթադրյալ օպտիմալ կետին հասցնելը, քանի որ նորամուծական քաղաքականության արդյունքում պետությունը ստեղծում է աճի նոր հնարավորություններ: Այս դեպքում շուկայի մասնակիցները չեն ընկալվում որպես ռացիոնալ որոշումներ կայացնող գործակալներ, և նորամուծական գործընթացների կենտրոնում ոչ թե շուկան է, այլ ինստիտուտները:

Այսպիսով՝ ամփոփելով վերոնշյալ երկու՝ շուկայի ձախողման և նորամուծական համակարգերի մոտեցումները, կարող ենք եզրակացնել, որ մասնավոր հատվածի դերը նորամուծական գործընթացներում առանցքային է, բայց դրանց արդյունավետությունը ուղղակիորեն կապված է ոլորտում պետական ակտիվ և նախաձեռնողական միջամտության կամ, այլ կերպ ասած՝ արդյունավետ ազգային նորամուծական համակարգի կայացման հետ:

Ազգային նորամուծական է հանրային և մասնավոր ոլորտներում գործող կառույցների այն համակարգը, որոնց գործունեության և փոխհարաբերությունների արդյունքում ստեղծվում, ներմուծվում, փոփոխության են ենթարկվում ու տարածվում նոր տեխնոլոգիաներ[9]:

Ազգային նորամուծական համակարգը միայն տեսական նշանակություն ունեցող վերլուծական հայեցակարգ չէ: Տարբեր երկրների կառավարություններ կիրառում են դա որպես զարգացման քաղաքականության մշակման գործիք:

Ազգային նորամուծական համակարգը բաղկացած է հետևյալ երեք հիմնական մասերից՝

- Գիտակրթական կազմակերպություններ, որոնց կարևոր գործառույթը հիմնարար հետազոտությունների իրականացումն է: Դրա արդյունքում ստեղծվում է գիտելիք, որը և հիմք է դառնում շուկայում նորամուծությունների ձևավորման համար: Մյուս գործառույթը որակավորված մասնագետների թողարկումն է, որոնք հետագայում նորամուծական շուկայում առանցքային դերակատարում են ունենում:
- Պետություն, որն իրականացնում է նորամուծական քաղաքականություն՝ ձևավորելով ֆորմալ ինստիտուտներ, ֆինանսավորելով հանրային բարիք համարվող գիտելիքի ստեղծումը և, անհրաժեշտության դեպքում, տրամադրելով սուբսիդիաներ մասնավոր կազմակերպություններին՝ նորամուծական արտադրանքների ստեղծման համար:
- Կազմակերպություններ, որոնք ստեղծելով նոր ապրանքներ և ծառայություններ, ինչպես նաև արդիականացնելով բիզնես գործընթացները, իրականացնում են նորամուծական գործունեություն՝ շահույթ ստանալու նպատակով:

---

[9] Տե՛ս **Freeman Ch.,** Technology Policy and Economic Performance - Lessons from Japan, London, “Pinter Publishers”, 1987, էջ 1:

Ըստ համակարգային մոտեցման տեսական դրույթների՝ քաղաքականության մշակման համար անհրաժեշտ է պատկերացնել կողմերի միջև փոխհարաբերությունների հիմնական շրջանակները:

Այսպես՝ «պետություն–գիտակրթական համակարգ» առանցքում պետությունը համագործակցում է հետազոտական կազմակերպությունների և համալսարանների հետ՝ հիմնարար գիտելիքի ստեղծման նպատակով: Այս համագործակցության արդյունքում ստեղծված գիտելիքը համարվում է հանրային բարիք, ֆինանսավորվում է հանրային հատվածի կողմից և հիմք է հանդիսանում առևտրային բնույթի նորամուծությունների ձևավորման համար:

«Գիտակրթական համակարգ – մասնավոր կազմակերպություններ» առանցքը ներառում է համագործակցության բազմաթիվ դրսևորումներ, ինչպիսիք են, օրինակ՝ ուսանողների ֆինանսավորումը, միացյալ հետազոտական ծրագրերը, համալսարաններից աշխատուժի ներգրավումը, և հակառակը: Սա կարևոր է հատկապես գիտության առևտրայնացման տեսանկյունից:

Պետություն – մասնավոր հատված փոխհարաբերությունների շրջանակներում կարող են դիտարկվել պետության կողմից իրականացվող մի շարք գործառույթներ: Նախ՝ պետությունը օրենսդրական դաշտ ձևավորելու միջոցով պաշտպանում է անհատների և կազմակերպությունների մտավոր սեփականության իրավունքները, կամ նորամուծական ոլորտում սահմանվում են առաջնահերթություններ՝ ելնելով տնտեսություն առանձնահատկություններից: Հարկաբյուջետային քաղաքականության միջոցով պետությունը կարող նվազեցնել որոշ կազմակերպությունների հարկային բեռը, ինչպես նաև ֆինանսական միջոցներ տրամադրել մասնավոր ոլորտում հետազոտությունների իրականացման նպատակով, պետական գնումների միջոցով խրախուսել նորամուծական գործունեությունը: Այս առումով, կարելի է նշել ՀՀ SS ոլորտում հարկային քաղաքականության առանձնահատուկ մոտեցումները:

Այսպիսով՝ չնայած նորամուծական քաղաքականությանը վերաբերող վերոնշյալ երկու տեսությունների հակասականությանը, երկուսն էլ կարևորում են պետական միջամտությունը նորամուծական գործընթացներում: Նորամուծական քաղաքականության նորդասական և էվոլյուցիոն տնտեսագիտության մոտեցումները ածանցված են վերոնշյալ տեսական դպրոցների համապատասխան դրույթներից: Այսպես՝ շուկայի ձախողման մոտեցումը ենթադրում է ինքնակարգավորվող շուկայական տնտեսություն և իրարից անկախ գործող ու ռացիոնալ վարքագիծ դրսևորող տնտեսական գործակալներ: Այս դեպքում պետական միջամտության նպատակը շուկայական ձախողումների շտկումն է: Ի տարբերություն դրա՝ նորամուծական համակարգերի մոտեցումը պետությունը դիտարկում է որպես նորամուծական շուկայում առանցքային դերակատար, և վերջինիս գործառույթը չի սահմանափակվում շուկայական ձախողումներն ուղղելով: Այն ժխտում է ինքնակարգավորվող շուկայական տնտեսությանը վերաբերող նորդասական դրույթները և նորամուծական քաղաքականության հիմքում ուսումնասիրում է ոչ թե շուկան՝ որոշակի ձախողումներով, այլ տնտեսական ինստիտուտները, որոնց միջոցով շտկվում են համակարգային ձախողումները:

Խորհրդային Միության փլուզման հետևանքով Հայաստանում տեղի ունեցան քաղաքական և տնտեսական արմատական փոփոխություններ: Չնայած Հայաստանը Խորհրդային Միությունից ժառանգել էր հզոր գիտակրթա-

կան համակարգ, այնուամենայնիվ, կենտրոնացված պլանավորման համակարգից կտրուկ անցումը շուկայական տնտեսությանը նորամուծական ոլորտում առաջացրեց մի շարք խնդիրներ և մարտահրավերներ: Դրանցից էին հետխորհրդային տարածաշրջանի տնտեսական կապերի խզումը, արդյունաբերության շեշտակի անկումը, ինչպես նաև որակավորված կադրերի արտագաղթը (ուղեղների արտահոսք): Բացի դրանից, խորհրդային տնտեսավարման պայմաններում նորամուծական գործընթացները իրականացվում էին գծային մոդելով[10], որը ենթադրում էր միակողմանի գործընթաց գիտական հետազոտություններից մինչև վերջնական արտադրանք: Ի տարբերություն վերջինիս, ազատ տնտեսավարման պայմաններում նորամուծության ստեղծումը պահանջում է առավել բարդ գործընթաց: Անկախացումից հետո անհրաժեշտություն առաջացավ մշակելու բարենպաստ ինստիտուցիոնալ միջավայր՝ նորամուծական ոլորտում շուկայական մեխանիզմների զարգացման համար:

Հայաստանում նորամուծական շուկայի առանձնահատկություններից կարելի է համարել գիտական մեծ ներուժի և արդյունաբերության բնագավառում գիտության հանդեպ համեմատաբար թույլ պահանջարկը[11]: Այս երևույթը կարելի է բացատրել մի կողմից՝ Խորհրդային Միությունից ժառանգած գիտակրթական համակարգով, մյուս կողմից՝ շուկայական ոչ հարուստ ավանդույթներով:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ նորամուծության ոլորտում համակարգային ձախողումները առավել խիստ են արտահայտվում:

Հայաստանում նորամուծական ոլորտին առնչվող իրավական դաշտը ստեղծվել է 2000-ականների սկզբին: Առաջին իրավական ակտը փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության մասին օրենքն էր, որտեղ նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը սահմանվում է որպես ՓՄՁ-ների պետական աջակցության հիմնական ուղղություն: Առավել մեծ քայլ ենք համարում նույն տարում ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է տվյալ բնագավառում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները: Այս օրենքով կարգավորվում են համապատասխան սուբյեկտների, պետական կառույցների գործունեությունը, ինչպես նաև վերջիններիս միջև փոխհարաբերությունները: Նշված օրենքը հիմք է գիտատեխնիկական քաղաքականության մշակման համար, չի անդրադառնում նորամուծական քաղաքականության առանցքում գտնվող մի շարք հարցերի, ինչպիսիք են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը կամ նորամուծական գործունեությունը խթանող միջոցառումները:

Նորամուծական քաղաքականությունը մշակվում է ըստ 2006 թ. ընդունված «Նորամուծական գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի, որն ապահովում է նորամուծական գործունեության հիմնական տնտեսական, իրավական և կազմակերպչական պայմանները:

---

[10]Տե՛ս **Inzelt A.,** Re-aligning the Triple Helix in post-Soviet Armenia, *Triple Helix,* Journal of University-Industry-Government Innovation and Entrepreneurship, Volime 2, Issue 1, 2015, https://link.springer.com/journal/40604/2/1/page/1

[11]Տե՛ս **Saumya M, Douglas A., Gyulumyan G., Holden P., Kaminski B., Kuznetsov Y., Vashakmadze E.**, The Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, WorldBank , Washington, DC, 2007, էջ 120:

Այսպիսով՝ վերը ներկայացված դրույթները կարող են որպես մեթոդաբանական հիմք ծառայել ՀՀ-ում արդյունավետ նորամուծական քաղաքականության մշակման համար: Ելնելով այդ դրույթներից՝ կարելի է կատարել որոշակի եզրահանգումներ.

- Նորամուծական շուկան բարդ է, և դրանում պետական հատվածի ներգրավվածությունը պարտադիր է: Վերջինս չպետք է դիտարկվի զուտ շուկայական համատեքստում: Կարծում ենք՝ ՀՀ-ում նորամուծական շուկայի զարգացման համար կան բավարար իրավական և ինստիտուցիոնալ նախադրյալներ:
- Ազգային նորամուծական համակարգի արդյունավետությունը պայմանավորված է դրա երեք բևեռների (պետություն, շուկա և գիտակրթական համակարգ) համահունչ զարգացմամբ, որը և կհանգեցնի տնտեսությունում ռեսուրսների օպտիմալ բաշխմանը: Այս տեսանկյունից առաջնահերթ են գործընթացների՝ նորամուծությունների խթանմանն ուղղված միջոցառումները, որոնք կնպաստեն շուկայում գիտության հանդեպ պահանջարկի աճին:
- Չնայած էվոլյուցիոն տնտեսագիտության առաջարկած նորամուծական քաղաքականության մշակման առավել կիրառական մոտեցմանը, այստեղ դեռևս բավարար մակարդակի վերլուծական գործիքակազմ և համապատասխան մեթոդաբանություն ապահովված չէ՝ հասկանալու, թե ինչքանով է օպտիմալ տվյալ քաղաքականությունը, քանի որ այս դեպքում տնտեսությունը դիտարկվում է որպես անընդհատ փոփոխվող համակարգ, որը չունի ենթադրյալ հավասարակշռության օպտիմալ կետ: Այս առումով, խիստ արդիական է համապատասխան գործիքակազմի մշակումը և տեղայնացումը՝ ՀՀ նորամուծական համակարգի զարգացման ռազմավարությունների ձևավորման իմաստով:
- Արդյունավետ նորամուծական քաղաքականության մշակման համար բավարար չէ պատասխանել միայն *ինչո՞ւ* և *ինչպե՞ս* հարցերին: Ոչ պակաս կարևոր է նորամուծության չափի և պետական մասնակցության օպտիմալ ծավալի գնահատումը: Այս խնդրի բարդությունն ընդգծվում է տնտեսության անընդհատ վերափոխվող բնույթով և տնտեսության վրա նորամուծական քաղաքականության անուղղակի և լագավորված ազդեցությամբ: Սա, իհարկե, վերաբերում է երկարաժամկետ զարգացումներին, սակայն կարևոր է նաև միջնաժամկետում կամ գոնե կարճաժամկետում տալ որոշակի գնահատականներ, որոնք կարող են օգտակար լինել ռազմավարությունների ձևավորման գործում: Ավելացնենք նաև վիճակագրական տվյալների առկայության հիմնախնդիրը, որը համապատասխան գնահատականներ ձևավորելու գործում լրացուցիչ խոչընդոտ է:
- Ազգային նորամուծական համակարգի արդյունավետությունը հնարավոր է գնահատել՝ ուսումնասիրելով այլ երկրների փորձը, կատարելով համեմատական վերլուծություններ, դիտարկելով այդ փորձի՝ ՀՀ-ում տեղայնացման խնդիրները:

Օգտագործված գրականություն

1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 09.01.2000:
2. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 30.12.2000:
3. «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 08.07.2016:
4. Greenhalgh C., Rogers M., Innovation, Intellectual Property, and Economic Growth, Princeton University Press, 2010.
5. Chaminade C., Esquis Ch., Rationales for Public Policy Intervention in the Innovation Process: Systems of Innovation Approach, The Theory and Practice of Innovation Policy, Edward Elgar Publishing, 2010.
6. Rassenfosse G., Jensen P., Webster E., Understanding Innovation: The Role of Policy Intervention, Melbourne Institite of Apllied Economic and Social Research, 2011.
7. Saumya M., Douglas A., Gyulumyan G., Holden P., Kaminski B., Kuznetsov Y., Vashakmadze E., The Caucasian Tiger: Sustaining Economic Growth in Armenia, WorldBank, Washington, DC, 2007.
8. Inzelt A., Re-aligning the Triple Helix in Post-Soviet Armenia, Triple Helix, Journal of University-Industry-Government Innovation and Entrepreneurship, Volime 2, Issue 1, 2015, https://link.springer.com/journal/40604/2/1/page/1
9. Freeman Chris, Technology Policy and Economic Performance - Lessons from Japan, London, “Pinter Publishers”, 1987.
10. Woolthuis R., Lankhuizen, M,Gilsing V., A system failure framework for innovation policy design, Technovation, Volume 25, Issue 6, 2005.

АЛЬБЕРТ САРКИСЯН
Аспирант кафедры Экономической информатики и информационных систем АГЭУ

Проблемы управления инновационных процессов в РА.– В статье обсуждаются инновационные процессы в экономике и в частности, ряд проблем государственного вмешательства в эти процессы. В экономической литературе инновационная политика представлена двумя основными противоречивыми теоретическими подходами. С одной стороны, неоклассическая экономика представляет рынок как гарантию достижения экономики социального оптимума, и государственное вмешательство обосновывается только в случае провала рынка, а с другой стороны, подход инновационных систем обеспечивает более широкий инструментарий инновационной политики, обосновывая их не рыночными, а системными провалами. В статье проведен сравнительный анализ двух вышеупомянутых подходов, и в этом контексте были представлены приемлемые тенденции инновационной политики в РА.

Ключевые слова: *инновационная политика, провалы рынка, системный провал, национальная инновационная система, эффективность политики.*
JEL: O30, O31, O32

ALBERT SARGSYAN
Post-graduate at the Chair of Economic Informatics and Information Systems at ASUE

The Problems of Innovation Processes Management in RA.– Innovation processes in the economy, particularly the number of issues regarding government intervention are discussed in the given paper. In the economic literature innovation policy is presented in two mutually contradicting theoretical approaches. On the one side neoclassical economics considers market as the guarantee for the economy to reach the social optimum and justifies government intervention only in case of market failure, and on the other side innovation systems' approach provides wider toolset justifying them not with just market but systemic failures. Comparative analysis of the last two approaches in the context of the RA innovation policy is presented.

Key words: *innovation policy, market failure, system failure, national innovation system, policy effectiveness.*
JEL: O30, O31, O32